ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇԱԽՄԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միավորված ազգերի կազմակերպության որոշմամբ հուլիսի 20-ը հռչակվել է որպես Շախմատի միջազգային օր՝ ընդգծելով այս բացառիկ մտավոր խաղի համամարդկային արժեքը, մշակութային ազդեցությունն ու դաստիարակչական նշանակությունը: Այս նախաձեռնության ակունքներում իր կարևոր ներդրումն ունի նաև Հայաստանը:

Շնորհավորում եմ բոլորիս Շախմատի համաշխարհային օրվա կապակցությամբ: Շախմատն ինտելեկտի, ռազմավարության և համբերության խաղ է, որը միավորում է տարբեր երկրներին՝ մրցահարթակ բերելով մտքի կարողություններն ու ճկունությունը:Անկախ նրանից՝ գրոսմայստեր ես, թե սկսնակ, շախմատն անսահման հնարավորություններ է տալիս սովորելու, աճելու և մարտահրավեր ընդունելու համար: Հայ ժողովուրդը՝ լինելով թվաքանակով փոքր, բայց հոգով ու միտքով հզոր, վաղուց է շախմատի դաշտում հաստատել իր մեծությունը: Մեր բազմաթիվ միջազգային հաղթանակներն ու վաստակաշատ շախմատիստների անունները փառքով են գրանցված համաշխարհային շախմատի պատմության մեջ:

Համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում են եղել և շարունակում են մնալ հայ շախմատիստների անուններն ու հաղթանակները, որոնցով մշտապես հպարտացել ենք և դեռ բազում առիթներ ենք ունենալու:

Սիրելի շախմատիստներ, թո՛ղ ձեր յուրաքանչյուր քայլ լինի խելամիտ, յուրաքանչյուր որոշում՝ վճռական, և ճանապարհը՝ հաղթանակներով լի:Ահա, թե ինչպես է շախմատի ուժը միավորում մտքերը և մեծություն ներշնչում:

Շնորհավոր Շախմատի միջազգային օրը: